Փաստաբանների պալատն այսուհետ կանդամակցի LAWASIA-ին

24.09.2026 14:30

ՀՀ փաստաբանների պալատն այսուհետ կանդամակցի նաև Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի իրավաբանական ասոցիացիային (LAWASIA):

2026 թ. սեպտեմբերի 14-ին LAWASIA-ի խորհուրդը միաձայն հաստատել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի՝ որպես հիմնական անդամ ընդունվելու հարցը:

Նշենք, որ Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի իրավաբանական ասոցիացիային (LAWASIA) անդամակցելը հնարավորություն է ընձեռում ընդլայնել միջազգային մասնագիտական կապերը տարբեր պետությունների հետ: LAWASIA-ին անդամակցում են պետություններ ինչպիսիք են Ավստրալիան, Հնդկաստանը, Հոնկոնգը, Կորեան, Սինգապուրը, Նոր Զելանդիան, Ռուսաստանը, Անգլիան, ԱՄՆ-ն, Գերմանիան, Չինաստանը, Ճապոնիան և այլն:

LAWASIA-ն ավելի քան 40 իրավազորությունների ներկայացուցիչ իրավաբանների, դատավորների, փաստաբանների և իրավաբանական կազմակերպությունների տարածաշրջանային միավորում է, որը ներկայացնում է Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի իրավաբանական մասնագիտության շահերն ու մտահոգությունները:

Որպես փաստաբանների և առաջատար իրավաբանական կազմակերպությունների ներկայացուցիչ՝ LAWASIA-ի առաքելությունն է խրախուսել և հեշտացնել տարածաշրջանային փոխգործակցությունը իրավաբանական կազմակերպությունների, փաստաբանների և իրավաբանական համայնքի այլ ներկայացուցիչների միջև բոլոր մակարդակներում, ներկայացնել Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի իրավաբանական համայնքի շահերը, խթանել օրենքի գերակայությունը, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը և իրավաբանական պրակտիկայի բարձր չափանիշները ինչպես նաև նպաստել որակյալ միջսահմանային իրավաբանական կրթությանը՝ անկախ ռեսուրսներից կամ զարգացման մակարդակից:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })